ՀԱՅԿԱԿ

ԱՄՍԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ամսագիրը կը հրատարակուի ամէն ամսոյ 1-ին եւ 15-ին։

Տարեկան 5 կոպէկ։

Ստացողներուն որոնց անուններուն դիմաց գրուած է 9-ից մինչեւ 2-ը։ Ցոյց կուտայ թէ մինչեւ ո՞ր (բանի՞ն) համարը պիտի ղրկուի։

Խմբագրատունը գտնուի Տաճատր. Редакція «Нор-Дяръ» въ Тифлисѣ. Rédaction «Nor-Dar».

Ստացուած ձրի օրինակներ չեն վերադարձուիր։

№ 185 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԱԹԵՐԹ Մարտ 31 Հին տոմարով Մարտիոյ 31 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԱԹԵՐԹ № 185

1886

ՀԱՅՐԵՆԻՔ

(Հոգեբանական ակնարկ)

Ի

ՅԱՂԹԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՉԱՐԻ ՄԷՋ

Թիֆլիս, 30 Հոկտեմբեր 1886

Ամէն մարդ, որ ունի հայրենիքի զգացմունք, ամէն մարդ, որ կը սիրէ իր հայրենիքը, ամէն մարդ, որ կը փափագի անոր բարգաւաճութեան, ամէն մարդ, որ կը ցանկայ անոր լաւագոյն ապագան, ամէն մարդ, որ կը տենչայ անոր ազատութիւնը, ամէն մարդ, որ կը ջանայ անոր ծառայել իր կարողութեան չափով, ամէն մարդ, որ կը հետաքրքրուի անոր ներկայ դրութեամբ, ամէն մարդ, որ կը մտածէ անոր ապագայի մասին, ամէն մարդ, որ կը ցաւի անոր վիճակին համար, ամէն մարդ, որ կ՚ուրախանայ անոր յաջողութեանց վրայ, ամէն մարդ, որ կը տրտմի անոր անյաջողութեանց համար, ամէն մարդ, որ կը պատրաստուի անոր համար զոհել իր կեանքը, ամէն մարդ, որ կը զոհէ իր կեանքը անոր համար

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ն 0ՉՈՒ

Ցանկացած գործունեության մեջ մեր ամենամեծ թշնամին մենք ենք ինքներս։ Մեր ներսում ապրող ամենամեծ թշնամին մեր ծուլությունն է, մեր անտարբերությունը, երբեմն մեր ինքնագոհությունը, մեր անհոգությունը, մեր անտեղյակությունը։

Ս. Ս.

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հրատարակվում է ամեն օր, բացի կիրակի և տոնական օրերից։

Խմբագրության և հասցեն՝ Երևան, Աբովյան փողոց, 3։

Հեռախոսներ՝ խմբագրության՝ 2-58-58, տպարանի՝ 2-58-59։

Տարեկան բաժանորդագինը՝ 36 ռուբլի, կիսամյակինը՝ 18 ռուբլի, եռամսյակինը՝ 9 ռուբլի։

Առանձին համարի գինը՝ 5 կոպեկ։

Ինդեքսը՝ 70000։

Տպագրված է Հայկական ՍՍՀ Ժողտնտխորհրդի տպարանում։

Հայկական ՍՍՀ Ժողտնտխորհրդի տպարան, Երևան, Աբովյան, 3։

Հանձնված է արտադրության 1958 թ. հունվարի 10-ին։ Ստորագրված է տպագրության 1958 թ. հունվարի 11-ին։

Թուղթ 70×108 1/16։ Տպագրական մամուլ 2։ Պայմանական տպագրական մամուլ 2,74։ Հրատարակչական մամուլ 3,29։

Պատվեր 135։ ՀՍՍՀ 00010։ Տպաքանակ 17,000։

Գինը 5 կոպեկ։

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԵՍՈՒՉԻՆ

Ֆրանսիայի հանրապետության նախագահ Ժյուլ Գրեվին ընտրվել է 1879 թվականին, երբ նրան 72 տարեկան էր։ Նա ծնվել է 1807 թվականին։ Ֆրանսիայի նախագահ ընտրվելուց հետո նա ապրել է ևս 12 տարի

նպատակ չունեին, բայց եթէ ոչ վարնային ռուսական հիւպատոսարանը և ռուսահպատակների ապահովութեան համար հսկել։ Թիւրքիան ըստ երևոյթին արտաքուստ հանգստանում է, բայց և այնպէս իսկոյն հրամանագրում է իր մարականաւերին, որ Բումելիայի ծովափերից չհեռանան և միշտ կազմ ու պատրաստ մնան, իսկ միւս կողմից էլ անդադար զօրքեր է քերել տալիս Փոքր-Ասիայից և լցնում է Բալկան թերակղզին, մանաւանդ Բումելիայի սահմանները, որ նա մտադիր է իսկոյն իր զօրքերով գրաւելու, հենց որ Ռուսիան էլ Բօլղարիան գրաւէ, կամ Աւստրիան մտադրուի զէպի Սալօնիկ առաջանալու։

Այս խառնափնթոր դրութեան մէջ մանակ բօլղարական կառավարութիւնը դեռ ժամանակ էլ է գտնում արտաքին յարաբերութիւնների մէջ էլ մանելու։

Այս օրերս Սերբիայի և Բօլղարիայի մէջ Նիշում կայացած է համաձայնութիւն, որով վերականգնում են այդ երկու երկրի մէջ դիպլօմատիկական յարաբերութիւնները։ Բանը նրանումն է, որ վերջին սերբ-բօլղարական պատերազմից յետոյ, երկու հարևան երկրների մէջ բարեկամական յարաբերութիւնները խզուած լինելով, յարմար առիթ պատահում է այդ յարաբերութիւնները վերականգնելու, թէև երկու կողմի չհերն էլ պահանջում էին այդ, երկու երկրների ժողովուրդներն էլ ցանկանում էին այդ։ Վերջին սերբ-բօլղարական պայմանագրութիւնը կազմուած է չորս կէտերից։ Ա. կէտում Բօլղարիան ցաւ է յայտնում Բրեգօվօի համար, որը Բօլղարիան պատերազմի ժամանակ առած լինելով՝ մինչի վերջի ժամանակը իւր ձեռումն էր պահել, որով երկու հարևան երկրների մէջ տարաձայնութիւն էր առաջացել։ Բօլղարիան խոստանում է ձեռք քաշել Բրեգօվօից, մինչև որ երկու ազգերից խառն մանդատորը վերջնականապէս վճիռ կը կայացնէ։ Բ. երկու կողմի տնտեսական դրութեան բարգաւաճման համար վեց չաբաթուայ ընթացքում կազմել խառն մանդատորով, որը պիտի քննէ երկու երկրների առևտրական պայմանները, իսկ մինչի այդ՝ երկուստէք էլ վաճառականները ամենայն տեսակ արտօնութիւններ պիտի վայելեն։ Բօլղարիան խոստանում է, որ չի թոյլ տալ որ սերբիական քաղաքական գաղթականները բնակութիւն հաստատեն Բօլղարիայի սերբիական սահմաններում. միևնոյն բանը փոխադարձաբար պարտական է անելու և Սերբիան Բօլղարիայի վերաբերմամբ։ Դ. Բօլղարիան պարտաւորվում է վակարելից զէպի Յարբրօդ երկաթուղու գիծ չինել։

Այսպէսով ուրևմն, երկու հարևան ազգութիւնների մէջ կրկին վերանորոգվում է բարեկամական կապը, որի խզումը այնքան ցաւ էր պատճառել երկու կողմին էլ և այնքան վնաս։ Այժմ արդէն երկու ազգերն էլ անչափ ուրախ են, որ թշնամական յարաբերութիւնները տեղի տուին բարեկամական յարաբերութիւններին։ Բայց Բելգրադի ռուսական դեսպանը սերբիական կառավարութեան յայտնեց, որ ռուսական կառավարութիւնը ապօրինի է համարում այդ պայմանը, որովհետև նա չէ ընդունում բօլղարական կառավարութեան օրինաւորութիւնը. հետևապէս և բոլոր նրա գործողութիւնները դիպլօմատիկական կողմից նշանակութիւն չունին իւր աչքում։

Ի հարկէ Ռուսիան չճանաչելով բօլղարական կառավարութիւնը, նրա ոչնչումներն էլ չպիտի ճանաչէր։

Դեռ յայտնի չէ, թէ ինչէ պատասխանել Սերբիան՝ Ռուսիայի այդ յայտարարութեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—«Temps» ֆրանսիական լրագիրը, որ միևնոյն նախագահ Ֆրէյսինէի օրգանն է համարվում, մի ընդարձակ յօդուած է նուիրել եգիպտական խնդրին, որից քաղուածաբար առաջ ենք բերում։

«...Ոչ մի բան այնքան երևելական չէ, որքան երբ մի պետութիւն իւր քաղաքականութիւնը ուղղում է իւր տարածած համակրութեան կամ անհամակրութեան համեմատ։ Եգիպտական խնդրում բացի Ֆրանսիայի չահերից և պատուից՝ ոչ մի բան չունինք աչքի առաջ։ Ֆրանսիան չէ ուզում, որ Անգլիան առ միշտ Նեղոսի Դէլտայում մնայ։ Սակայն նախ քան պահանջելը, որ Անգլիան դուրս գայ Եգիպտոսից, պէտք է իմանալ, թէ ով է նրա տեղը բռնելու։ Բոլորովին անելորդ յաւատեսութիւն կը լինէր, եթէ կարծէինք, որ անգլիական զօրքերը Եգիպտոսից դուրս գալուց յետոյ, Եգիպտոսը աղատ պետութիւն կը դառնայ, որ խեդիւը հաստատուն կը լինի իւր դահի վերայ, որ չի դուրս գալ մի նոր Արաբի-փաշա, որ եգիպտական զօրքերը հենց թշնամուն տեսածին պէս զէնքերը թողած փախուստ չեն տալ... Եգիպտոսը պէտք է Աֆրիկայի Բիզմարքն դառնայ, չատ լաւ, բայց նախ այդ աֆրիկացիներին բելգիացի դարձնել, հենց հարցն էլ դրանումն է, թէ ով է այդ անելու, և ինչ եղանակով»։

—Վիեննայից «Нов.»-ին հեռագրում են, որ իտալական գործակալ Չօլան ապանուել է Բուչչուկում։ Իտալական լրագիրները չափազանց զրգռուած են խօսում այս ցաւալի դէպքի մասին։

—Դիպլօմատիկական կուրեր Դալմերը արտաքոյ կարգի հեռագիրներով Բերլինից եկաւ Սօֆիա։ Հեռագիրների բովանդակութիւնները դեռ յայտնի չեն։

—«Temps»-ին հեռագրում են Վարնայից որ սէր Ռէայոլը տեսակցել է արտաքին գործերի մինիստրի հետ, որի միջոցին չօշափելով ռուսական զօրքեր վարնա ուղարկելու հարցը, խորհուրդ է տուել, որ Թիւրքիան էլ իւր նաւերը ուղարկէ Վարնա—Ռուսիայի հետ միասին գործելու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կնամաճառութիւն—Մեկսիկայի Յօնակագիտական գաւառում, հնդիկները կանանց առևտրով էլ են զբաղվում և ամենաքաջ իրենց կանանց կամ ծախում են և կամ վարձով տալիս որոշ ժամանակով. երբ որ այդ ժամանակամիջոցը լրանալով նրանց կանայքը վերադառնում են տուն, հնդիկները գրկաբաց, մեծ ուրախութեամբ ընդունում են նրանց, կարծես թէ ոչինչ եղած չլինէր։ Իսկ Ցերնանո գաւառի հնդիկները ոչ միայն իրենց կանանց են վարձով տալիս, այլ և սկեսուրներին։ բարդ չհարիէ, վերջինների համար աւելի ածան են վերցնում։

***

Ճարպիկ գողութիւն—Վենայի յայտնի մի ոսկերչի մօտ գալիս է մի չքեղ հագնուած տիկին և մի ածան գնանոց ապարանջան գնելով, վճարում է փողը և գնում է դուրս։ Երկու ժամ անցած, ներս է մտնում խանութը մի գեղեցիկ և հարուստ հագնուած պարոն և ցանկանում է խօսակցել խանութատիրոջ հետ։ Նրան ներս են տանում ոսկերչի առանձնասենեակը. անծանօթը նախ հանեց իւր անցեստոմը և յայտնեց իւր անունը՝ իւր այս ինչ գրաֆ... այնուհետև խորհրդաւոր եղանակով ոսկերչին յայտնեց, թէ ինքը ունի մի գոյր, որը գողութիւն անելու ախտով է վարակուած, այնպէս որ նա կարող չէ համբերել՝ մինչև որ մի բան էլ բացի գնածից թագուն չը վերցնի։ Սրանից յետոյ նա բացատրում է, որ իւր գոյրը այսօր էլ եկել է խանութը և մի մատանի է գողացել, որ կարծեցեալ գրաֆը յանձնում է ոսկերչին։ Դուրս եկաւ, որ ճշմարիտ մատանին գողացուած է եղել խանութից՝ գործակատարների անզգուշութեան պատճառով։ Ջափաղանց քաղաքավարի գրաֆը խնդրում է ոսկերչին, որ եթէ իւր գոյրը կրկին բան առնելու գայ և մի բան գողանայ, աղմուկ, խայտառակութիւն թող չբարձրացնէ, որովհետև գողացուած իրը նրան կը վերադարձնեն, այնուհետև նա իւր հասցէն յայտնելով ոսկերչին՝ դուրս գնաց խանութից։ Մի քանի օրից յետոյ, ոսկերչի խանութի առաջ մի փառաւոր կառք կանգ է առնում. կառքից դուրս է գալիս չափազանց չքեղ հագնուած նոյն մատանին գողացող կինը։ Նա գնում է մի քանի ածանդին մատանիներ և թևերի մէջ պահում է մի թանկագին բրիլիանտ մատանի։ Գործակատարները և նոյն իսկ տէրը իրենք չտեսնող ձևացան այդ։ Կինը նըստում է կառք և գնում է, իսկ ոսկերիչը սպասում է, որ գողացած մատանին վերադարձնեն, բայց ոչ ոք չէր գալիս։ Այն ժամանակ ոսկերիչը մարդ է ուղարկում գրաֆի հետևից—բայց գրաֆ չկար։ Թէև ոտքի հանեցին ոստիկանութիւնը, բայց արդէն գողերի հետք անդամ չկար։

***

(Մեր կեանքից)

Թուաբանութեան դասին ուսուցիչը ամեն կերպ աշխատում է աշակերտին հասկացնելու, որ զանազան առարկաների թուերը կարելի չէ միմեանց հետ գումարել։ Երկար բացատրութիւնից յետոյ, նա դառնում է մի աչքաբաց աշակերտի։

—Մինաս, հապա այժմ դուն առաւօտուայ մի ձի է կապած և մի էշ իմացիր, քանի էշ կայ աւտուայ։

—Երկու էշ վարժապետ, արագութեամբ պատասխանում է աշակերտը։

—Այդ, ինչ ասեցիր, միթէ ես էշ եմ...

—Ներողութիւն, վարժապետ, էշ—վարժապետի մէջ մոռացայ ստորակէտ դնելու։

***

Ինչպէս պէտք է վարուել կերօսինի լամպայի հետ։ Կերօսինի լամպերից յաճախակի առաջացած հրդեհների առաջն առնելու համար Դրէզդէնի տեխնիկական մասնախումբը հետևեալ խորհուրդներն է հրատարակել։ 1) կերօսինը պէտք է սառը տեղ պահպանել և մետաղեայ ամաններում։ 2) լամպաների մէջ կերօսինը պէտք է ցերեկով ածել։ 3) պատրոյկը պէտք է որ մաքուր լինի և գործիքին յարմար։ ոչ հատ և ոչ էլ չատ բարակ։ 4) պատրոյկը և մեքենան պիտք է ամեն օր մաքրել և այրուածքը հեռացնել։ 5) պատրոյկը պէտք է որ բոլորովին ուղիղ հատարար կարուած լինի։ 6) պատրոյի օդանցքերը պէտք է ամեն օր մաքրել։ 7) փչացած պատուհակները պէտք է անմիջապէս փոխել։ 8) չպէտք է թողնել, որ նաւթը բոլորովին վառի, հատնի ամանի մէջ։ 9) լամպայի ներքևի մասը, որի մէջ նաւթ է ածվում, պէտք է միշտ հեռու պահել այնպիսի տեղերից, որ նա չտաքանայ։ 10) լամպը հանգցնելու համար ոչ հարկաւոր է պատուհակը արագութեամբ պոչոցատալ և ոչ էլ վերևից ուղղակի փչել բոցի վերայ։ 11) մանկական սենեակներում նախապատիւ է կախուած լամպեր ունենալ։

***

Կրաչեվսկիյ հռչակաւոր լեհ վիպասանը, չնայելով իւր ծերութեան և բանտում ստացած հիւանդութիւններին, էլի չարունակում է պատմական վէպեր գրել լեհական կեանքից։ Մօտերքս նա հրատարակեց «Աստուածային բարկութիւն» վէպը։ Իւր գրած պատմական վէպերից սա թերևս վեհագոյնը հատորն է։

***

Զարմանալի լեզուագէտ։ Այժմ Պարիզում ապրում է մի իտալացի գրագէտ Կամինի անունով (վենետիկեցի), որ 93 լեզուներով և խօսում է և գրում։ Այս լեզուագէտը դերազանցում է նշանաւոր կարդինալ Մեցցոֆանտիին, որը գիտցիկ կերպով խօսում է 58 զանազան լեզուներով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՄՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 Հոկտեմբերի

ՃՈՒՐՃԵՎՕ. Այսօր կէս օրին Ռուշչուկի քաղաքապետի ստորագրութեամբ հրատարակուած է հետևեալ հեռագիրը. «Ազգային մեծ ժողովը ժամը 11-ին, միաձայն հաւանութեամբ դանիական պրինց Վալդեմարին ընտրեց բօլղարական իշխան»։

Ժողովը նոյնպէս ընտրեց մի պատգամաւորութիւն, որ նորընտիր իշխանին գնալով կը շնորհաւորէ նրա ընտրութիւնը և նրան կը յանձնէ ընտրութեան թուղթը։

30 Հոկտեմբերի

ՏՐՈՆՕՎՕ. Պրինց Վալդեմարին բօլղարական իշխան ընտրելու նախընթաց օրը եղած ժողովի գաղտնի նիստում, Սամբուլովը մի ճառ խօսեց, որի մէջ ապացուցանում էր, որ պրինց Ալէքսանդը Բատտեմբերգին երկրորդ անգամ իշխան ընտրելը անհնար է և յոյց տուեց պրինց Վալդեմարի առաւելութիւնները—որպէս ազգակից Ռուսիային, Անգլիայի և Յունաստանի թագաւորական տան։ Սամբուլովը ժողովից չծածկեց այն թէ հաւանական է, որ Ռուսիան ընտրութիւնը չընդունի, բայց և այնպէս հարկաւոր է այդ անել, մանաւանդ որ, պրինց Վալդեմարի անունը ապացոյց կը լինի բօլղարական կառավարութեան և ժողովի խաղաղասէր զգացմունքներին։ Իսկ եթէ պրինց Վալդեմարը հրաժարուի բօլղարական գահից, այն ժամանակ հարկաւոր կը լինի գրութեան համապատասխան միջոցների ձեռնարկել։

Ընտրութեան թուղթը պրինց Վալդեմարին յանձնելու համար պատգամաւորութիւնը արդէն կազմուած է և ուղևորվում է դէպի Կանն, ուր որ այժմ պրինցը գտնվում է։

Կարավելովը հրաժարական տուեց։

ԼՕՆԴՕՆ. Լորդ-մերի տուած բանկետում Սալիսբիւրին ճառ խօսեց, որի մէջ բօլղարական գործերի վերաբերմամբ յայտնեց, որ ներկայումս անգլիական շահերը դրա պատճառով վնասուած չեն, բայց եթէ վնասուելու լինէին, Անգլիան կարող է նրանց պաշտպանել. բայց միւս պետութիւններից առաջ գործելը նա աննպատակայարմար է գտնում։ Եգիպտոսի վերաբերմամբ Սալիսբիւրին ասաց, որ Անգլիան Եգիպտոսից չի դուրս գալ, մինչև որ նրան օտար քաղաքականութիւնից անվտանգ պահպանուելու գրութեան չհասնի և մինչև որ եգիպտական ներքին անկարգութիւնները չը վերջացնէ։ Սալիսբիւրին ճառի վերջում այն համոզումը յայտնեց, որ խաղաղութիւնը չի խանգարուիլ, և մինչև անգամ շուտով վաճառականութիւնն ու արդիւնաբերութիւնները կենդանութիւն կը ստանան։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեներալ-Լէյտենանտ ԻՇԽԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ ՄՈՒԽՐԱՆՍԿԻ և նրա որդի զնդապետ ԻՇԽԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԻՎԱՆԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ ՄՈՒԽՐԱՆՍԿԻ յայտնելով առաջինը իւր ամուսնոյ ու երկրորդը իւր մօր վեհափայլ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՆԻՆԱ ԼԻՎԱՆՈՎՆԱ ԲԱԳՐԱՏԻՈՆ ՄՈՒԽՐԱՆՍԿՈՒՀԻ մահուան մասին խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հոգեհանգէսին, որ տեղի կունենայ կիւրակի, նոյեմբերի 2-ին առաւօտեան 10 ժամին, Մցխեթայի մայր եկեղեցում։ Նոյեմբերի 2-ին արտակարգ երկաթուղու գնացքը կը գնայ Մցխեթ առաւօտեան 9-ը ժամին 10 ր., իսկ այնտեղից կը վերադառնայ սրուայ 4 ժամին 30 ր. անց։ 2—1

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Շորեքշաբթի, նոյեմբերի 12-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ՔՕՇԵԼ» (Boschel) Բաթումից կը դնայ Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕԻՆ, նախկին գաղերէյա Արծրունիների № 103. 4—2

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Октября 1886 г. Տպարան Մ. Պ. Թօխինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-о Гол. пр., д. № 41